# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ղեկավարվելով*** «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

***հաշվի առնելով*** ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 21.12.2017թ. թիվ 500-Լ որոշմամբ (1) «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն», (2) «ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն» և (3) ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցերով 2017 թվականի փետրվարի 11-ին հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրված լինելու հանգամանքը,

***նկատի ունենալով*** ՀՀ փաստաբանների պալատի 11.02.2017թ. հերթական ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը կարգավորելու անհրաժեշտությունը,

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

- ***Հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2017 թվականի փետրվարի 11-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**20 հունվարի 2017թ.**
**թիվ 10-Լ**
**ք. Երևան**